

ՀԱՅՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՉՈՒՄԸ, ՆՊԱՏԱԿՆ ՈՒ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅՔ Հաստատության կոչումն ու նպատակը կայանում է հայ ազգային գոյատևման եւ զարգացման համար ամենակենսական նշանակություն ունեցող գաղափարները, կարիքներն ու խնդիրները ըմբռնելու, վերլուծելու եւ դրա հիման վրա տարբեր բնագավառների ազգային ամենաբարենպաստ քաղաքականությունն առաջարկելու մեջ:

ՀԱՅՔ Հաստատությունը, իր սկզբունքի համաձայն, ազգային խնդիրներին մոտենում է գիտական օբյեկտիվությամբ եւ համահայկական չափանիշով ու հեռանկարով եւ բացարձակապես զերծ է որեւէ հատվածական շահագրգռվածությունից եւ կամ ազդեցությունից:

ՀԱՅՔ Հաստատության գործունեության հիմնական մասը կազմում է՝
ա) Հայ ազգային ամենակենսական գաղափարների ու խնդիրների բարձրացման, հստակեցման եւ դրանց գործնական լուծման համար գիտահետազոտական ծրագրային աշխատանքների կատարումը, գործակցելով համապատասխան գիտահետազոտական հաստատությունների եւ անհատների հետ:

բ) Այդ աշխատանքների արդյունքները հայության տարբեր հատվածներին, շրջանակներին ու խավերին մատչելի դարձնելը տարբեր մակարդակներով եւ ձեւերով:

ՀԱՅՔ Հաստատությունը հիմնադրված է եւ ղեկավարվում է, եւ կամ աջակցություն գտնում հայության ճակատագրով մտահոգ եւ կյանքի այլազան բնագավառներում էական փորձառությամբ, տարբեր վայրերում ապրող անձանց կողմից: Նրանք ՀԱՅՔ Հաստատությանը օգնում են միայն այն գիտակցությամբ, որ հայ իրականության մեջ նման հաստատության գործունեությունը, վաղուց ի վեր կենսական անհրաժեշտություն է:

ՀԱՅՔ Հաստատությունը որեւէ ձեւով չի կապված, չի ազդված ու առավել եւս չի ղեկավարվում որեւէ քաղաքական, պետական կամ այլ նման կազմակերպության կողմից:

ՀԱՅՔ Հաստատությունը ազգային շահերին հետեւող, գիտահետազոտական ծրագրային բնույթի գործունեությամբ, շահույթ ստանալու նպատակ չիետապնդող, լրիվ անկախ ընկերակցություն է:

ՀԱՅՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԸ

ՀԱՅՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏԱՄԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԱՆԴՈՒՂԱՌՆՈՒՄ ԵՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԿԵՆՍԱԿԱՆ ՏԱՐԲԵՐ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄԱՄԻՐՄԱՆԸ, ՎԵՐԼՈՒԾՄԱՆԸ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՄ ԱՌԱՋԱԲԿՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆԸ:

Առաջին ծրագիրը վերաբերում է հայի տոհմիկ հարազատ կերպարի վերականգնմանը, որով նա կկարողանա ճանաչել իր ազգային հավատամբը, բարոյական արժեքները, որոնք միաժամանակ համամարդկային արժեքներ են, եւ կկարողանա դրանք կիրառել ամենօրյա կյանքում՝ անձնական, ընտանեկան, ընկերային եւ ազգային հարաբերություններում:

ՀԱՅՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԹԻՎ 1 ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԸ ԿԱԶՄՈՂ
«ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՐՈՅԱԳԵՏՈՒԹՅՈՒՆԸ»

ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱՃԱՆԱԶՄԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒՄ ԵՎ ԲՆՈՐՈՇՈՒՄ Է ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՐՑԵՐԸ, ԵՐԵՎԱՆԻ ԴԱՐՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

Ա. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԽԱՌՎԱԾԵ, ՆԿԱՐԱԳԻՐ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ:

Բ. ԴԱՐԱՎՈՐ ԻՐԱՎԱԶՈՐԿ ՎԻՃԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԻ, ՄՏԱԾԵԼԱԿԵՐՊԻ ՎՐԱ:

Գ. ՊԵՏԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՎ ԱՊՐԵԼՈՒ ԴԱՐԱՎՈՐ ԶՐԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ, ԱԶԳԱՅԻՆ ԿՅԱՆՔԻ ՏԱՐԲԵՐ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ, ՀԱՅԻ ԸՆԿԱՆՄԱՆ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՎՐԱ:

Դ. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՎԱՏՔԻ, ՈԳՈՒ ԵՎ ՆԿԱՐԱԳՐԻ, ԵԹԵ ԱԶԴՎԱԾ ԵՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՄԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆ-ԸՆԿԵՐԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ:

Ե. Եթե ԱԶԴԱՅԻՆ Է, ԻՆԶՊԵՄ ԿԱՐԵԼԻ Է ՀԱՅՈՒԹՅԱՆԸ ՁԵՐԲԱԶՍՏԵԼ ՈՐՈՇԱԿԻ ՍՏՐԿԱՄՏՈՒԹՅԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՆԿԱՍՄԱՄԲ ԱՆԳԻՏԱԿԻԾ, ԱՆՀԱՂՈՐԴ ԵՎ ԽՈՐԹԱՅԱԾ ՎԻՃԱԿԻԾ:

Զ. ՀԱՅԻ ՏՈՒՄԻԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՐՊԱՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՄԱՄԱՐԴԱՅԻՆ ՉԱԺԱՆԻՇՆԵՐՈՎ:

ԱՅԴ ԿԵՐՊՈՎ ԱՊՐԵԼՈՒ ԱՆՀԱՏԱԿԱՆ, ԸՆՏԱՆԵԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԴԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: ԻՆՉ ԿՍՏԱՆԱ ԴԻԱՆԻՑ ԱԶԳՆ ՈՒ ՄԱՐԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔՆ ՈՒ ԱՆՀԱՏԸ:

ԱԿՆԿԱՎՈՒՄ Է, ՈՐ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵԲԱՐՈՅԱԿՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ՄԵԾԱՊԵՍ ԿՕԳՆԻ ՎԵՐՈՀԻՇՅԱԼ ԽՆԴԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ, ԱՌԱՋԱՅՆԵԼՈՎ ՆԱԵՎ ԱՅՆՊԻՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՐՏԱՃԱՆԱՉՈՒԹՅՈՒՆ, ՈՐՈՆՔ ԿԵՆՍԱԿԱՆՈՐԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ՁԵՐԲԱԶՍԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ՀԱՏՎԱԾՆԵՐՈՒՄ, ՏԱՐԲԵՐ ՉԱԺԵՐՈՎ ՈՒ ՁԵՎԵՐՈՎ ՏԵՂ ԳՏԱԾ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԱՌՏԵՐԻԾ:

ԻՄԿ ԻՐ ԹԻՎ 1 ԾՐԱԳՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԸ ԿԱԶՄՈՂ

«ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱԺԱՐԱՌՈՍՈՒԹՅՈՒՆԸ»

ՀԱՅՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆ ԸՄԲՈՆՈՒՄ Է ՀԵՏԵՎՅԱԼ ԿԵՐՊ:

ԳԱՂԱԺԱՐԱՌՈՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԱՐԴԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ, ԳՈՅՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎԱՐՔՆ, ԻՄԱՍՏԱՎՈՐՈՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ Է:

ԳԱՂԱԺԱՐԱՌՈՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՅՆ ԿՐՈՂԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՎԱՏԱՄԲԸ, ՀԱՄՈՋՄՈՒՆՔՆԵՐԸ, ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ, ԶԳՏՈՒՄՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ԿԵՐՊԵՐԸ ԲՆՈՐՈՇՈՂ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ Է, ՓԵԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆՆ Է, ԴՐՈՇՄՆ Է:

ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ԳԱՂԱԺԱՐԱՌՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԵՎ ԴՐԱՆՑ ՍԱՀՄԱՆՈՒՄՆ Է, ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄԵՆԱՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՈՒ ԱՄԵՆԱՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄՆ Է՝ ՄԵԺԱԿԱՆ ՊԱՏՎԻ ԵՎ ՀԱՎԱՏԱՄԲԻ ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՄԸ:

ՀԱՅՔ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ «ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱԺԱՐԱՌՈՍՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳԻՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ, ՎԵՐԼՈՒԾՈՒՄ ԵՎ ԲԱՅԱՏՐՈՒՄ Է ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՐՑԵՐԸ:

Ա. ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ՝ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱԺԱՐԱՌՈՍՈՒԹՅՈՒՆ:

ՈՐՆ Է ԱՅՆ, ԻՆԶՈՒՄՆ Է ԱՅՆ ԿԱՅԱՆՈՒՄ ԵՎ ՈՐԲԱՆՈՎ Է ՃԱՆԱՉԱԾ ՈՒ ԿԻՐԱՌՎՈՒՄ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ:

Բ. ՈՐՈՆՔ ԵՆ ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔՆԵՐՆ ՈՒ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ ՀԱՄԱՄԱՐԴԱՅԻՆ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ:

Գ. ԻՆԶՈՒ՝ ԵՎ ԻՆԶՊԵՄ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ:

- ԻՆԶՈՒ. ՊԵՏՔ Է ԱՅՆ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱ:

- ՈՐՆ Է ԱՅԴ ԳՈՅՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԸ՝

ԱՆՁՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԴԱՅԻՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆՆԵՐԻԾ:

Դ. ԻՆԶՈՒ՝ ԵՆՔ ՀԱՅ ԵՎ ԻՆԶՈՒ՝ ՊԵՏՔ Է ՀԱՅ ԼԻՆԵՆՔ ՈՒ ՆՈՐ ՄԵՐՈՒՆԴՆԵՐԻՆ ՀԱՅ ՊԱՀԵՆՔ: ԻՆԶՆ Է ՄԵՋ ՊԱՐՏԱՎՈՐԵՅՆՈՒՄ ԴՐԱՆ: ՈՐՆ Է ԴՐԱ ՕԳՈՒՏԸ, ԵԹԵ ԱՅՆ ԿԱ:

Ե. ԻՆԶՊԵՄ ԿԱՐԵԼԻ Է ՀԱՅԻՆ ՀԱՅ ԼԻՆԵԼ ԱՅՍՕՐ՝ ԳԱՂԱԺԱՐՈՎ, ԲԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՎ, ԳՈՐԾՈՎ:

ԱՅՍ ԵՎ ՆՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԲԱՅԱՀԱՅՏԵԼ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱԺԱՐԱՌՈՍՈՒԹՅԱՆ ԲԱՂԱՅՈՒԹԻՉ ՏԱՐԲԵՐԸ, ԲՆՈՐՈՇԵԼ ԴՐԱՆՑ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՐՏԱԿԱՆ ԴԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՍԱՀՄԱՆԵԼ ԴԵՊԻ 21-ՐԴ ԴԱՐ ԱՌԱՋՆՈՐԴԵԼՈՒ ԿԱՐՈՂ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱԺԱՐԱՌՈՍՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԻՄՈՒՆԻՏԵՏ, ԱՅՄԻՆՔՆ՝ ՎԱՐԱԿԱՄԵՐԺ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ, ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԳԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՑԻ ՇԱՂԱՌ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԸ:



«ԱՍՏՈՒԾՈՅ ՄԻԱԾԻՆ ՈՐԴԻՆ՝
ԼՈՒՅՍԻ ԼՈՒՅՍԸ,
ԿՅԱՆԹԻ ԿՅԱՆԸ
...եկավ...

որպեսզի...
մեզ կրկին
ԱՍՏՈՒԾՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՅՆԻ»

Ս. Գրիգոր Լուսավորիչ

ՀԱՅ

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

(ՀԱԳ)

ՀՍՏԱԿԵՅՄԱՆ ԵՎ ՃԱՆԱՉՄԱՆ ԶԱՅԼԵՐ

ՆԱԽԱԲԱՆ

Հայոց Ազգային Գաղափարախոսություն (ՀԱԳ) հասկացությունը, նրա էությունը, բաղադրամասերը, դերը, նշանակությունը եւ դրանց հարակից հարցերն ու խնդիրները, ըստ երեսույթին երկար ժամանակից ի վեր պատշաճորեն չեն արձարծվել հայ իրականության մեջ: Գալով մեր ժամանակաշրջանին, առնվազն վերջին վաթսուն-յոթանասուն տարիների ընթացքում ՀԱԳ-ի վերաբերյալ հարցերն ու խնդիրները դրված չէին, կամ որեւէ կիրառական նշանակությամբ դրված չէին Սփյուռքում եւ բացարձակապես գոյություն չունեին Հայաստանում եւ ներքին Սփյուռքում: Խորհրդային Հայաստանում, եթե որոշ շրջանակներում ու պարագաներում այնուամենայնիվ բացահայտորեն արձարծվում էին ազգային գաղափարախոսության հարցեր, ապա միայն վատաբանելու եւ վարկաբեկելու համար ազգային գաղափարն ու դրա նշանակությունը՝ կեղծ, ապազգային ու անմարդկային տեսություններով եւ բացատրություններով: Վերջին հաշվով փաստն այն է, որ թե՛ խորհրդային վարչակարգի տակ ապրող հայության մեջ եւ թե՛ Սփյուռքում պատշաճորեն չի արձարծվել ու պարզաբանվել Հայոց Ազգային Գաղափարախոսության պատմական նշանակությունը եւ մանավանդ արդի պայմաններում նրա դերի կենսական անհրաժեշտությունը:

Արդյունքն եղավ այն, որ Հայությունն անտեսեց, մոռացավ, եթե չասենք ուրացավ, իր ազգային գաղափարախոսությունը, որն արտահայտում է իր էությունը, իմաստավորում ու արժեւորում է իր գոյությունը, կոդմնորոշում է իր ընթացքը, տալիս է իրեն ուժ, գործություն, դիմացկունություն ու իրական կյանքի անասան, հաստատում է հավերժական ԵՐԱՇԽԻԹ:

Խորհրդային ռեժիմի քայքայման վերջին տարիներին եւ հատկապես 1989 թվականից, Հայաստանում ՀԱՅԶ հաստատության վերահաստատումից ի վեր, Հայաստանի որոշ գիտահետազոտական եւ բարձրագույն ուսումնական հաստատությունների տեղեկացվեց ՀԱԳ-ի վերաբերյալ գիտահետազոտական ծրագրի մասին, որպես ազգային հույժ կարեւոր եւ առաջնահերթ պահանջ (տես՝ ՀԱՅԶ հաստատության թիվ 3 Տեղեկագիրը) եւ այդ ուղղությամբ համագործակցություն առաջարկվեց: Մոտավորապես մինչեւ 1990 թվականի վերջը Հայաստանում այդ մասին լսում էին մեծամասամբ լեյլայն զգուշությամբ, երբեմն կասկածամտորեն, երբեմն հակառակվելով, սակայն գրեթե մշտապես հարեւանցի անտարբերությամբ եւ առանց պատշաճ հասկացողություն ցուցաբերելու պատրաստականությամբ:

1991-1992 թվականների ընթացքում զգացվեց, որ ՀԱԳ-ի նկատմամբ Հայաստանի մտավորական որոշ շրջանակներում հետաքրքրությունն աճեց: Սկսվեց ավելի ստեպ խոսվել ՀԱԳ-ի կարեւորության աստիճանի վերաբերյալ եւ նույնիսկ առաջարկություններ արվեցին նրա ստեղծման համար մտածելու եւ ուսումնասիրություններ կազմակերպելու մասին: Արդյունքն եղավ այն, որ 1993 թվականից ի վեր ՀԱԳ-ի մասին բանավեճերն ու քննարկումները դարձան ավելի հրապարակային եւ հաճախակի: Տարբեր առիթներով սկսեցին տարբեր գնահատականներ տրվել ՀԱԳ-ի անհրաժեշտության եւ նշանակության մասին՝ սկսած նրանից, թե այն օգտակար չէ

հայության համար, մինչեւ այն, որ առանց ՀԱԳ-ի անհնարին է լուծել Հայ ազգի ու հայրենիքի հիմնական խնդիրները եւ հետեւապես, թեւ ուշացումով՝ հարկ է անհապաղ ձեռնարկել նրա ստեղծմանը:

Բոլոր դեպքերում, 1993 թվականից ՀԱԳ-ի առնչությամբ գիտահետազոտական աշխատանքները Հայաստանում սկսեցին դառնալ համեմատաբար ավելի ծրագրված եւ նպատակային: Մի շարք սեմինար խորհրդակցություններում գիտաշխատողներն արդեն որոշակի աշխատանքների ծրագրեր եւ մեթոդաբանական մոտեցումներ առաջարկեցին. սկսած հայոց պատմության նորոգ ուսումնասիրումից եւ գնահատումից, մինչեւ՝ այլ ազգերի, կուսակցությունների, քաղաքական շարժումների եւ կրոնների, գաղափարախոսությունների ուսումնասիրումը՝ պատմաբանական, հոգեբանական, սոցիոլոգիական, քաղաքագիտական, աստվածաբանական եւ այլ ուղղություններով:

Այս առումով ՀԱԳ-Ի վերաբերյալ, նրա էության, դերի, նշանակության եւ կարեւորության աստիճանի մասին ՀԱՅԶ հաստատությունը տարբեր առիթներով արտահայտվել է միայն մասնակի որոշակիությամբ, ակնկալելով, որ այլ հաստատություններ, կամ անհատ հետազոտողներ ու մտածողներ կարտահայտվեն այդ ուղղությամբ եւ բազմակարծության պայմաններում կընթանա խնդրի ընդհանուր ըմբռնումը եւ դրա բավարարումը: Թեւ այդ անկեղծ հույսը դեռեւս կա, այնուամենայնիվ կարծում ենք, որ ժամանակն ու տեղը եկել է, որ ՀԱԳ-Ի վերաբերյալ ՀԱՅԶ-ն ավելի պարզ, հստակ եւ որոշակի արտահայտվի, հիմնականում շեշտը դնելով դրա համապարփակ, մինչեւ վերջ պարզաբանման եւ կիրառման վրա, այլ ոչ միայն գիտական ձեւակերպման որոշակի պահանջների բավարարման վրա:

ՀԱՅ

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

(ՀԱԳ)

ՀՍՏԱԿԵՑՄԱՆ ԵՎ ՃԱՆԱՉՄԱՆ ԲԱՅԼԵՐ

ՀԱՅ ԱԶԳՆ ՈՒՆԵՑԵԼ Է ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ (ՀԱԳ): ԱՅՂ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է, ՈՐ ԱՅՍՕՐ ԷԼ ԱՅՆ ԿԱ: ՈՒՍՏԻ, ԲԱՆԻ ՈՐ ԿԱ, ԱՅԼ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ՓՆՏՐԵԼԸ ԿԱՄ ՆՈՐ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾԵԼՆ ԱՆԻՄԱՍՏ Է, ՈՐՈՎՀԵՏԵՎ ԵՂԱԾԻՅ ԲԱՅԻ ՈՒՐԻՇԸ ԶԻ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ: ՈՒՐԵՄՆ ՀԱԳ-Ի ՊԱԿԱՍԸ ԶԿԱ. ՊԱԿԱՍՈՒՄ Է ՆՐԱ ՃԱՆԱՉՈՒՄԸ, ՈՐՈՇ ԶԵՎԱԿԵՐՊՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԵՎ ԿԻՐԱՌՈՒՄԸ՝ ԿՅԱՆՔԻ ԲՈԼՈՐ ՀԱՆԳՐՎԱՆՆԵՐՈՒՄ:

Սակայն ի՞նչ է ՀԱԳ-ը: Ե՞րբ եւ ի՞նչի՞ց է այն առաջացել: Ի՞նչի՞ վրա է հիմնված: Ի՞նչ դեր է կատարել դարերի ընթացքում: Ի՞նչ նշանակություն է ունեցել հայության գոյության համար: Եվ այսօր, ինչպիսի՞ն է ՀԱԳ-ի դերը եւ նշանակությունը Հայ ազգի ու նրա հայրենիքի գոյատեւման, զարգացման ու բարգավաճման համար:

- Նախ եւ առաջ ՀԱԳ-ն աստվածատուր շնորհ է:
- ՀԱԳ-ը բխում է Աստուծո խորհուրդներից եւ հիմնված է նրա հավատքի վրա:
- ՀԱԳ-ի գոյացումը սրբագործվեց եւ կենսագործվեց մեկ թվականին Աստուծո մարդկայնացմամբ, աշխարհի Փրկիչ՝ Հիսուս Բրիտոսի Ծնունդով: Ավարտվեց երեք հարյուր մեկ թվականին Հայոց Պետականության Բրիտոնեացմամբ ու Հայոց Հայրապետության հիմնադրմամբ:
- ՀԱԳ-ն արտահայտել է Հայ ազգի, Հայրապետության եւ Պետության հավատամքն ու գոյության իմաստը 301 թվականից

ի վեր, երբ տիեզերական ու հավիտենական խորհուրդների գերբնական ակունքներից բխող Աստվածաշնորհի Հավատը դարձավ Ազգային Գաղափարախոսության հիմքը՝ հայ ժողովրդի բոլոր խավերի համար. թե՛ ավագանու, թե՛ շինականի, թե՛ աղքատի եւ թե՛ հարուստի:

- ՀԱԳ-ը հայության հավատքի երկնականարում ծագեց որպես լուսատու աստղ եւ կողմնորոշեց նրա պատմական ընթացքը: ՀԱԳ-ն այնպիսի նոր իմաստ եւ ուղղություն տվեց հայի անձնական ու ազգային կյանքին, բարձրացրեց Ազգի կենսունակությունը, գորացրեց նրա ստեղծագործ ոգին եւ օժտեց Ազգն անկրկուն դիմացկունությամբ, որ ի գորու դարձրեց նրան՝ իր դարավոր երթում հաղթահարել տարբեր խոչընդոտները, փորձությունները եւ երրորդ հազարամյակի շեմին վերականգնել իր ազգապետությունը:

ՀԱԳ-Ի ՀԻՄՔՈՒՄ, ՈՐՊԵՍ ՈՒՍՄՈՒՆՔ ԵՂԵԼ Է ՀԱՎԱՏՔԸ, ՈՐ՝

- Աստված կերտեց աշխարհն իր հավիտենական ու տիեզերական կամքով:

- Աստված ստեղծեց մարդկային ցեղը, ծրագրելով որոշակի ժամանակաշրջանի համար նրա գոյությունը եւ զարգացումն ազգերի առաջացմամբ, զարգացմամբ եւ բարգավաճմամբ:

- Հայ ազգի գոյացումը, ինչպես ամեն ազգի, որպես մարդկության բաղկացուցիչ մասը Աստուծո Տիեզերական եւ Հավիտենական Կամքով ու Ծրագրով է կատարված:

- Հայի հայ մնալը եւ Հայ ազգի գոյատեւումն ու զարգացումը Աստվածային կամքի եւ նրա Ծրագրի կատարումն է:

- Հայ ազգի պահպանման, զարգացման եւ բարգավաճման համար Աստուծո առաջ պատասխանատուն հայն է՝ իր անմահ հոգու հատուցման հավատքով, հույսով եւ գիտակցությամբ:

ԱՍՏՈՒԾՈՆ ՀԱՎԱՏՔԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ
ՀԱԳ-Ի ԸՄԲՈՆՈՒՄՈՎ

- Հայոց պետականության քրիստոնեացմամբ, Հայ ազգը վերակերտեց իր կյանքը, վերաստեղծեց իր մշակույթը եւ աստվածատուր աննահանջ դիմադրողականությամբ ընդդիմացավ թշնամուն՝ չարին, դիմացավ փորձություններին ու հարթեց իր գոյության աստվածապատվեր ուղին դարերի միջով:

- Բոլոր պայմաններում՝ ստրուկ թե՛ ազատ, կարիքավոր թե՛ բավարարված, իր հողի վրա թե՛ օտարության մեջ, իր ազգային գաղափարախոսությամբ տոգորված հայը հոգով, մտքով եւ վարքով ձգտեց պաշտպանել, պահպանել ու նաեւ ծաղկեցնել իր տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի իրեն հանձնված անդաստանը՝ իր Ազգային աստվածապատգամ Գոյությունը:

- Այնքան ժամանակ, որ Ազգը, պահպանելով եւ մշակելով իրեն հանձնված Անդաստանը՝ Հայոց Աստվածանվեր Գոյությունը, պարտաճանաչորեն տալիս էր նրա պատուներն իր Տիրոջը, այսինքն կատարում էր նրա պատգամները եւ ինքն էլ սնվում դրանց կենսանյութով, ոչ մի դժվարություն, հալածանք, զրկանք, վտանգ, կամ փորձություն չկարողացավ կասեցնել հայի աստվածապատվեր ընթացքը, այն է՝ ապրել իմաստավորված կյանքով երկրի վրա եւ արժանանալ հավիտենական կյանքին:

- Եթե հայն իր աստվածատուր գոյությունը հավատարմությամբ պահպանի ու զարգացնի հայրենիքի մեջ, թե հայրենագուրկ պայմաններում, ապա աստված անպայման կշնորհի նրան նաեւ ազատ, անկախ, ապահով ու բարգավաճ ազգապետություն:

- Հայությունը պարտավոր է Սուրբ Ազգապետություն ստեղծել ու պահպանել, ուր չի թույլատրվում, որ մուխտար կասեցնի իր անդաստանի՝ Աստվածատուր Գոյության կենսունակությունն ու կենսավությունը...:

ՀԱԳ-Ի ԸՄԲՈՆՈՒՄԸ ՄԱՐԴՈՒ, ՀԱՅԻ ԵՎ ՀԱՅ
ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Մարդու եւ Ազգի գոյության էական իմաստն Աստուծո կամքի եւ ծրագրի կատարումն է. աստվածասիրությամբ ապրել Նրա պատգամներով եւ ընտանիքի ու Ազգի պահպանմամբ ու զարգացմամբ՝ պահպանել եւ զարգացնել մարդկությունը: Անհատն ու Ազգն այդ իմաստավորմանը կարող են արժանանալ Աստվածաշնորհ սիրով, հավատքով եւ հավիտենական կյանքի հույսով:

Իր կամքի եւ Ծրագրի իրագործման համար Աստված ստեղծեց մարդու բնությունը, նրա բնական հատկությունները: Սակայն այդ բնական հատկությունների կիրառմամբ Աստվածային կամքի եւ Ծրագրի կենսագործման լիարժեք մասնակիցը դառնալու համար անհրաժեշտ է Սուրբ Հոգու շնորհով ստանալ Աստուծո հավատքը եւ հաղորդվել Հիսուս Քրիստոսի Ավետարանին: Ավետարանի հաղորդությամբ քրիստոնեական հավատն Աստված շնորհեց մարդկությանը եւ առաջին հերթին իր սիրեցյալներին, իր սիրած եւ պաշտոնի կոչած ազգերին, որոնց մեջ Հայ ազգն առաջնային է, որպես պետականորեն քրիստոնեացած ազգ:

Աստուծո շնորհիվ՝ Հիսուս Քրիստոսի Ավետարանի հաղորդությամբ ճանաչվում է Հավիտենական ճշմարտությունը՝ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ եւ ուղղություն ու կարողություն է տրվում ապրելու աստվածահաճո ճշմարիտ կյանքով եւ արժանանալ Աստուծո արքայությանը:

Աստուծո՝ Հայ ազգին շնորհած Տեր Հիսուս Քրիստոսի Ավետարանից եւ խաչից բխող ՓՐԿՈՒԹՅԱՆ հավատը հազար յոթ հարյուր տարի առաջ հայ անհատի եւ պետության համար դարձավ նոր ազգային փիլիսոփայական ուսմունք ու համոզմունք. դարձավ սոցիալական գաղափար, ըմբռնում, վարքագիծ եւ կենցաղավարություն ու այս բոլորով ՓՐԿՈՒԹՅԱՆ հավատը վերակերտեց հայ մարդու ներքնաշխարհը, կերպարը, ազդեց

նրա խառնվածքի, հոգեբանության եւ նկարագրի վրա. վերասահմանեց կյանքի՝ նրա ըմբռնումները, իմաստավորումը, բարոյական արժեքները եւ, որպես հետեւանք՝ էականորեն վերափոխեց նրա անձնական եւ հավաքական ընկալումներն ու վերաբերմունքը՝ անձի, Ազգի եւ մարդկության նկատմամբ:

Իր Աստվածային լուսակերտմամբ ճանաչելով Հավիտենական ճշմարտությունը՝ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ, Ազգը շնորհ, ուղղություն եւ կարողություն ստացավ ապրելու ճշմարիտ կյանքով աշխարհում ու հավերժության մեջ: Փրկության հավատքով, հայ մարդն իմաստնացավ հոգեպես եւ հավիտենական կյանքի հույսից բխող մտայնությամբ եւ վարքով կերտեց ու ապրեց մարդկային իսկական, քրիստոնեական կյանքն իր անձնական, ընտանեկան ու ազգային հարաբերություններում: Դրա արդյունքում շեշտակիորեն ավելացավ Ազգի ստեղծագործ գործությունը՝ իր գոյության պաշտպանության եւ զարգացման համար: Դառնալով Աստվածային բնության եւ խորհուրդների հաղորդակից, Հայ ազգը ստեղծեց հոգետր ու նյութական կոթողներ, եւ դարձավ մարդկային գիտության ու արվեստների, ինչպես եւ ազգերի գոյության ու արժանապատվության պահպանման համաշխարհային ջանքերի գործուն գործակից:

Մեր նախահայրերը հազար յոթ հարյուր տարի առաջ մեր ազգի ճշմարիտ կյանքի գոյության համար դրեցին այնպիսի անսասան հիմքեր, կառուցեցին ազգի դիմացկունության, հզորության, զարգացման եւ բարգավաճման այնպիսի ամրոց եւ դրա պաշտպանության համար շրջապատեցին այնպիսի պարիսպներով, որ ոչ ոք, որեւէ միջոցով՝ խոսքով կամ գործով, զենքով կամ զրահով, ինչպիսին էլ լինեին դրանք՝ ատոմային թե էլեկտրոնային, չի կարող խախտել, գրավել դրանք: Չի կարող, որովհետեւ այդ պարիսպներից անցնելու, այդ ամրոցը մտնելու եւ այն կործանելու բանալին ոչ ոք չունի: Միակ բանալին, որ գոյություն ունի, Աստված հանձնած է ... հենց իրեն՝ Հայ ազգին: Եվ Հայ ազգը միայն կարող է այն գործածել իր գոյության պահպանման,

զարգացման եւ բարգավաճման օգտին, կամ... գործածել այն իր գոյության դեմ՝ ինքնահոժար, առանց նույնիսկ դիմադրելու, բացելով իր դարպասներն իր գոյության էությունն արտահայտող եւ կենսագործող գաղափարախոսության թշնամիների առաջ, դաշնակցելով նրանց հետ իր գոյության դեմ:

Բազմաթիվ են հայոց թշնամիները: Բայց դրանցից ամենաոխերիմ եւ վտանգավոր թշնամին ՀԱԳ-ի թշնամի՝ անաստված քրիստոսամերժությունն է: Սակայն դրանցից էլ վատ ու կործանարար վտանգ այն ժամանակ է առաջանում, երբ անաստված քրիստոսամերժությունը գալիս է հայության միջից: Եվ կիրառվում է նենգաբար ազգային կյանքի տարբեր ասպարեզներում՝ հանգրվանորեն: Կիրառվում է նրանց կողմից, որոնք բացահայտ չեն խոստովանում իրենց աստվածամերժությունը. ընդհակառակը, նրանք առերես, կեղծորեն հավատավորված, իսկ հաճախ նույնիսկ կեղծորեն հոգետր ծառայությամբ սքեմավորված շահագործում են Աստուծո մեր հավատը, Նրա անունը եւ ապակողմնորոշելով, մոլորեցնելով եւ գայթակղեցնելով ներսից քանդում, ավերում են ներքինը: Եվ այդ բոլորի համար փոխանակ ըստ Ավետարանի, ջրաղացի քարը մեր վզից կապելով ծովը նետվելու, հավակնում եւ ձգտում ենք նույնիսկ ավելի մեծ դերակատարություն ստանձնել: Այսինքն ավելի մեծ ավերածության եւ զոհերի տեղիք տալ առանց վախենալու հատուցումից: Բայց հատուցումը չի կարող չլինել, այն անխուսափելի է: Այն եղել է, կա՝ ու դեռ պիտի լինի: Էական հարցն այն է, թե ազգովի՞ն պիտի շարունակենք հատուցել: Եվ բացի այդ, այդ հատուցումն ի՞նչ հետեւանքներ պիտի շարունակի ունենալ մեր վրա անհատապես եւ ազգորեն:

Ելք կա՞ հայության այս ընթացքից: Ո՞րն է այն: Ի՞նչ պետք է անենք ու ինչ չպե՞տք է անենք: Սա է կենսական հարցը, որի ճիշտ կամ սխալ, ժամանակին կամ ուշացումով պատասխանը ձակատագրական է լինելու մեզ համար, մեր ազգի համար:

Հայությունից սպասվող ձակատագրական պատասխանի մաս

պետք է կազմի նաեւ այն, թե որպէս ի՞նչ ազգ ենք դիմավորելու 2001 թվականը, հայոց պետականորեն քրիստոնեացման հազար յոթ հարյուր ամյակը՝ մեր ԼՈՒՍԱՎՈՐՄԱՆ հորելյանը: Դիմավորելու ենք, որպէս դարերի ազատագրությամբ բթացած եւ «Ուր հաց այնտեղ կաց» հասկացողությունը, որպէս կյանքի փիլիսոփայություն եւ նպատակ ընդունած ծառայի հոգեբանությամբ, կամ յոթ տասնամյակ սովետական մարդու դաստիարակության ամենասովորոտ արդյունքն արտահայտող՝ անհավատ, վախկոտ, անսկզբունք եւ կեղծավոր կամակատարի նկարագրով, կամ աշխարհի փորձը բացասականորեն ընկալած, ազգային եւ մարդկային արժեքների գնահատումից զուրկ, նյութական կյանքի ձեռքբերումների համար միջոցների մեջ խտրություն չդնող, ընդամենը ճարպիկ, չարչի քաղքենու մտայնությամբ, թե որպէս իր նախնյաց աստվածաշնորհի խորհուրդներից հաղորդ, նրանց աստվածատուր առաքիությունները կրող, եւ նրանց աստվածապատվեր վարքը շարունակելու հանձնառությամբ պատրաստակամ ԱԶԳ:

Վերոհիշյալ եւ նարնց հարակից հարցերին պարտավոր ենք պատասխանել շիտակ եւ անհապաղ: Դա հայոց, ուր էլ նրանք բնակվեն եւ ինչպիսի պայմաններում էլ գտնվեն, ամենակենսական անձնական, ընտանեկան, հասարակական եւ պետական խնդիրն է: Մենք այդ պատասխանները պարտավոր ենք տալ մեր Աստծուն, մեր սուրբ նախնյաց եւ բոլոր զոհերին. պարտավոր ենք պատասխանել մարդկությանը, պատմությանը եւ մեր սերունդներին: ԵՎ պարտավոր ենք պատասխանել մեր սրտով, հոգով, գործերով ու նաեւ մեղա գալով: Այնպէս պատասխանել, որ մեր որդիք այլեւս այդ անհրաժեշտության առաջ չկանգնեն երբեք: Այլ վայելեն աստվածահաճո ու շնորհակալ Ազգի եւ նրա օրհնյալ չայրենիքի կենսունակ, ստեղծագործ, ապահով, խաղաղ ու իմաստալից կյանքը երկրի վրա՝ ազգերի ընտանիքում, ու նաեւ արժանաճան Աստուծո խոստացած հավիտենական իրական կյանքին՝ Աստուծո Արքայությունում:



«ՎԱՍՆ ՀԻՍՈՒՄԻ,
ՎԱՍՆ ՀԱՅՐԵՆՅԱՑ»
Ս. Վարդան Մամիկոնյան

ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ, ՈՐ ՏՎՅԱԼ ՀԱՐՅԵՐԻ ՈՒՂԻՂ ԵՎ
 ՃԵՄԱՐԻՏ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԿԱՐԵԼԻ Է ՏԱԼ ՄԻԱՅՆ ԱՍՏ-
 ՎԱԾԱՇՆՈՐՀ ԲՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԻՅ ԲԽՈՂ ԵՎ
 ՆՐԱ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈ-
 ՍՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՄԲ, ԸՆԴՈՒՆՄԱՄԲ ԵՎ ԿՅԱՆՔԻ
 ԲՈԼՈՐ ՀԱՆԳՐՎԱՆՆԵՐՈՒՄ ԴՐԱ ԿԻՐԱՌՄԱՆ ՊԱՐՏԱ-
 ՃԱՆԱՉ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՄԲ:

